

# ՌԱՅԱՅԷԼԻ ԲԱՔՈՒԷՆ ✓ ԵՐԵՒԱՆ ԱՆՑԱԻ

## ՌՈՒՄԲԵՐ ՎԱՐԴԵՆԻՍ ԵՒ ԱՅԼ ՇՐՋԱՆՆԵՐ

Սէ -- էՍ -- Սէ -- Ը-ի պատուիրակութիւնը զոր վը դիտաւորէ Ռաֆայէլի Բաքուէն Երեւան անցած էր Օգոստոս 26-ին: Գէորգի Պետրոսեան (Ղարաբաղի Խորհրդարանի առժամեայ նախագահը) յայտնած է իրեն թէ չի կրնար Երեւան երթալ զինքը տեսնելու տեղւոյն ծանրակշիռ կացութեան պատճառաւ եւ հրապարած է Ռաֆայէլին որ Ստեփանակերտ երթայ:

Ապահովութեան Խորհուրդը «խորապէս մտահոգ» է Լեռնային Ղարաբաղի կացութեան վարտարացումէն եւ կոչ ըրած է (Օգոստոս 26) անմիջական հրադարարի մը:

\*\*

### ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ղազախաստանի նախագահը Նուրսուլթան Նազարբայեւ Ղարաբաղի հարցին մասին բանակցութիւններ կարելի դարձնելու եւ հաշտարար լուծում մը դտնելու նպատակով դիմած է Հայաստանի եւ Ադրբեջանի, առաջարկելով իր միջնորդութիւնը: Երեւան եւ Բաքու համաձայնած են կատարուած առաջարկին ու ընդունած՝ հանդիպում մը ունենալու դադափարը: Հայաստան -- Ադրբեջան -- Ղազախաստան հանդիպումը տեղի կ'ունենայ Ղազախաստանի մայրաքաղաք՝ Ալմա -- Աթայի մէջ:

\*\*

Օգոստոս 26-ին, Քելլաչարի տարածքէն ուրակոծուած են վարդենիսի շրջանի Զողաւանը եւ մերձակայ ոսկիի հանքերը: Վիրաւորուած են երկու պատանիներ, որոնցմէ մէկը քիչ ետք մեռած է: Նոյն օրը, վաղ առաւօտին ոսումբեր ինկած են (9 ժամ անդադար) Կապուն եւ շրջակայքը, ուր 30 արկ եւ հրթիռ արձակուած են: